ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի հ.2330-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ս. Զորավարի փողոցի հ.11/1 հասցեում գտնվող «Երևանկահույք» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 2.34127 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել իրավասու համապատասխան մարմիններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևանի ավագանու սույն որոշման նախագծով նախատեսվում է Ս.Զորավարի փողոցի հ.11/1 հասցեում սեփականության իրավունքով «Երևանկահույք» ԲԲԸ-ին պատկանող 23412.7 քմ մակերեսով հողամասի /հիմք՝ անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի պետական գրանցման 25.10.2006թ հ.2187408 վկայական/ նպատակային նշանակությունը դասակարգել բնակավայրերի հողերի կատեգորիայի:

Համաձայն առկա հատակագծի և քարտեզային տվյալների՝ նշված 23412.7 քմ մակերեսով հողամասը գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների գոտում, մինչդեռ փաստացի հողամասն այդ նպատակով չի օգտագործվում, գտնվում է բնակավայրում և շրջապատված է բնակելի և հասարակական նշանակության օբյեկտներով:

Տվյալ հողամասում ընկերությանը պատկանող նախկին արտադրական, պահեստային ու օժանդակ շենք-շինությունները վերակառուցվելու են որպես առևտրի օբյեկտների, կազմակերպվելու է տոնավաճառ, դրան ուղեկցող վարչական ու սպասարկման մասերով, ինչի պարագայում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համապատասխան անհրաժեշտություն է առաջանում հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի:

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը հավանության է արժանացել ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների /բնակավայրերի/ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և վերջինիս կողմից տրվել է դրական եզրակացություն:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 8-րդ կետի՝ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն և դրանց նախագծման առաջադրանքները համայնքի ղեկավարի ներկայացմամբ քննարկվում են միջգերատեսչական հանձնաժողովի նիստում և հաստատվում են համայնքի ավագանու կողմից միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ